ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերով սահմանված դեպքերում հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հանձնված նվերները դառնում են պետական կամ համայնքային սեփականություն: Մասնավորապես՝ Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հանրային ծառայողին կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձին պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները իրենց արժողությամբ գերազանցում են վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը, ապա դրանք համարվում են պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով դրանք հանձնել պետությանը կամ համայնքին: Օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ սահմանված ժամկետում նվերը վերադարձնելու կամ համարժեք հատուցում վճարելու անհնարինության դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված են այնպիսի իրավիճակներ, երբ անթույլատրելի է ստացված նվերները հանրային ծառայողների մոտ մնալը: Միաժամանակ նախատեսված է նաև նշված դեպքերում համապատասխան նվերները Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությունը համարվելու կանոնը:

Չնայած վերոգրյալին՝ գործող օրենսդրությունը վերը հիշատակված հիմքերով պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման հետ կապված

առանձնահատուկ կարգավորումներ չի նախատեսում և սահմանափակվում է միայն սահմանելով, որ Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասում նշված գույքը տնօրինվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով կամ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այս համատեքստում չեն բացառվում այնպիսի իրավիճակներ, երբ պետությունը, դառնալով գույքի սեփականատեր, չօգտագործի իրեն անցած գույքը և չիրականացնի դրա օտարմանն ուղղված որևէ գործողություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իշխանության համապատասխան մարմինը, ըստ էության, վերոնշյալ գույքն օտարելու կամ որևէ կոնկրետ եղանակով կամ կոնկրետ ժամկետում այլ կերպ տնօրինելու պարտականություն չունի:

Մինչդեռ, հաշվի առնելով «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված և պետական գույքի կառավարման բոլոր դեպքերում պարտադիր սկզբունքները, ինչպես նաև պետական գույքի կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականության միասնական, թափանցիկ և հրապարակային լինելու պահանջները և նույն օրենքի 9-րդ հոդվածով պետական գույքի կառավարման նպատակներում նաև պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը ներառված լինելը՝ ակնհայտ է, որ պետության սեփականությունը համարվող գույքի տնօրինման յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի գույքի այնպիսի կառավարում, որի արդյունքում պարզ, հասանելի և հանրության համար հասկանալի կլինի պետական սեփականություն համարվող գույքի, այդ թվում՝ վերոնշյալ խումբ գույքերի հետագա ճակատագիրը:

Չնայած վերոգրյալին՝ պետությանը սեփականության իրավունքով փոխանցվող նվերները, ի տարբերությունը պետական սեփականություն համարվող այլ գույքերի, մի շարք առանձնահատկություններ ունեն: Նախ, այդ գույքերը հաճախ իրենց նպատակային նշանակությամբ ու բնույթով այնպիսինն են, որ օբյեկտիվորեն չեն կարող օգտագործվել պետական կառավարման մարմինների կողմից՝ ուղղակիորեն իրենց լիազորությունների իրականացման համար:

Երկրորդ, պետությանը սեփականության իրավունքով փոխանցվում են նաև պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները, ինչպես նաև այլ թույլատրելի չհամարվող նվերներ, որոնք նվիրող

անձինք, հատկապես եթե խոսքն օտարերկրյա կազմակերպությունների կամ օտարերկրյա քաղաքացիների մասին է, կարող են առհասարակ տեղեկացված չլինել տվյալ նվերի հնարավոր ոչ թույլատրելիության կամ պետության սեփականությունը դառնալու և դրա տնօրինման հետ կապված օրենսդրական այլ կարգավորումների վերաբերյալ, ինչպիսի պայմաններում այն նվիրելիս ունեն իրավաչափ ակնկալիք առ այն, որ տվյալ նվերը տրվում է կոնկրետ պաշտոնատար անձին: Նման պայմաններում հետագայում տվյալ նվերը պետությանը սեփականության իրավունքով փոխանցվելու դեպքում տվյալ նվերի հետագա ճակատագիրն այն նվիրողի համար կանխատեսելի չէ: Ավելին, նվերի ճակատագիրը, ըստ էության, կանխատեսելի չէ նաև հանրության ու տվյալ նվերը պետությանը փոխանցող պաշտոնատար անձի համար:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հանրային ծառայողներին տրված արարողակարգային նվերները կամ ոչ թույլատրելի նվերները պետության սեփականություն դառնալու վերաբերյալ կարգավորումները լայնորեն տարածված են: Ընդ որում, որոշ երկրների օրենսդրությամբ կարգավորվում են նաև պետության սեփականությունը դարձած նվերների հետագա տնօրինման հարաբերությունները:

Մասնավորապես, «Հանրային ծառայողների էթիկայի մասին» Իռլանդիայի օրենքի[1] 15-րդ մասի համաձայն՝ եթե նվերի արժեքը գերազանցում է 650 եվրոն, ապա այն համարվում է պետությանը տրված նվեր և հանձնվում է Իռլանդիայի Ֆինանսների նախարարին: Միաժամանակ, նույն օրենքով կա կարգավորում առ այն, որ պաշտոնատար անձը պետք է հնարավորինս շուտ Կառավարության քարտուղարին տեղեկացնի նվերի մասին և պետության անունից և քարտուղարի հրահանգներին համապատասխան պահպանի այն մինչև նվերի հետ կապված պայմանավորվածությունների ձեռքբերումը: Այնուհետ Կառավարության քարտուղարը, Կառավարության ընդհանուր ցուցումների համաձայն, կազմակերպում է պետության կողմից կամ նրա անունից գույքի խնամակալությունը կամ դրա տնօրինումը: Քարտուղարը նաև պետք է տնօրինի գույքի նկատմամբ տնօրինման իրավազորության արդյունքում գոյացած ցանկացած հասույթ: Նվերը

[1]Հասանելի է հետևյալ հղումով՝ https://europam.eu/data/mechanisms/FD/FD%20Laws/Ireland/1.%20Ethics%20in%20Public%20Office%20Act%20of%201995_ENG,%20consolidated,%20last%20amended%202018.pdf:

կարող է տնօրինվել՝ այն հանձնելով պետական գանձապետարան կամ օրինակ բարեգործական նպատակներով:

Լատվիայում գործող օրենսդրական կարգավորումների համաձայն՝ դիվանագիտական, ինչպես նաև արտասահմանյան պաշտոնական կամ աշխատանքային այցերի ժամանակ, Լատվիայի Հանրապետության ազգային տոներին և հիշատակի օրերին, այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ձեռնարկության (ընկերության) տարեդարձին տրված, որտեղ պաշտոնյան աշխատում է, կամ օրենքներով նախատեսված կամ Կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում տրված նվերները պետական սեփականություն են: Դիվանագիտական նվերները գրանցվում են Արտաքին գործերի նախարարության պետական արձանագրության միասնական գրանցամատյանում, և դրանց տնօրինման վերաբերյալ որոշումներ կայացվում է Արտաքին գործերի նախարարի կողմից[2]:

Սլովենիայում գործող իրավակարգավորումների համաձայն՝ պետական համապատասխան մարմինը պարտավոր է տնօրինել պետության սեփականությունը դարձած գույքի պատշաճ արձանագրումը, պատշաճ օգտագործումը, պահպանությունը և հնարավոր ապահովագրությունը: Այդ գույքի տնօրինման կարգը սահմանում է համապատասխան մարմնի ղեկավարը: Եթե գույքը պետության սեփականությունը դառնալուց հետո պարզվում է, որ այն իր հատկանիշներից ելնելով հարմար չէ պահպանության համար, գույքը պետք է տրվի նմանատիպ գույքերի վաճառքով զբաղվող կազմակերպություններին կամ մարդասիրական կազմակերպություններին[3]:

Հետաքրքրական է նաև նվերների տնօրինման առնչությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը: Սահմանված է, որ չթույլատրվող նվեր ստանալու դեպքում հանրային ծառայողը դիմում է համապատասխան գերատեսչությանը, որի կողմից նվերը թույլատրելի չլինելու վերաբերյալ եզրակացություն ստացվելու դեպքում ծառայողը գերատեսչության եզրակացությամբ այն հանձնում է ծառայողական օգտագործման: Ծառայողական օգտագործման անհնարինության

[2] Ավելի մանրամասն տե՛ս հետևյալ հղումով https://www.oecd.org/latvia/37117322.pdf:

[3] Տե՛ս Սլովենիայի «Նվերների ընդունման հարցում պաշտոնյաների համար սահմանափակումների և պարտականությունների մասին» կանոնները, հասանելի է՝ Pravilnik o omejitvah in dolžnostih funkcionarjev v zvezi s sprejemanjem daril (pisrs.si):

դեպքում համապատասխան մարմինն այդ գույքն առանձնացնում է որպես ոչնչացման ենթակա: Եթե գույքը որպես ոչնչացման ենթակա չի առանձնացվում, հանրային ծառայողին առաջարկվում է գնել գույքը, և եթե վերջինս հրաժարվում է գույքը գնելուց, գույքը հանձնվում է իրավասու պետական գործակալությանը՝ դրա իրացումը կազմակերելու նպատակով, որն իր հերթին այն իրացնում է աճուրդի եղանակով կամ նվիրատվությամբ՝ համապատասխան ընթացակարգով նախապես որպես նվիրատվության շահառու գրանցված անձանց[4]:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ առկա է Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ հիմքերով պետական սեփականություն դարձող գույքի տնօրինման հետ կապված առանձնահատուկ կարգավորումների սահմանման անհրաժեշտություն:

Ընդ որում, պետության սեփականությունը դարձող նվերները, ըստ էության, երկու մեծ խմբի են բաժանվում՝ արարողակարգային նվերներ և պաշտոնական այցերի, գործուղումների ժամանակ տրվող նվերներ, երկրորդ՝ ոչ թույլատրելի նվերներ, որոնք նվիրողին վերադարձնելը կամ համարժեք փոխհատուցում տրամադրելն անհնարին է: Այս նվերների երկրորդ խմբի դեպքում խոսքն այնպիսի նվերի մասին է, որը նվեր ստացած հանրային ծառայողի կամ համապատասխան պետական կառավարման մարմնի տնօրինության կամ օգտագործման ներքո թողնելը, ըստ էության, անթույլատրելի է, ուստի առկա է նշված խումբ նվերները հրապարակային սակարկություններով կամ նվիրաբերության եղանակով իրացնելու վերաբերյալ կարգավորումների սահմանման անհրաժեշտություն:

Մինչդեռ իրավիճակն այլ է վերոնշյալ առաջին խումբ նվերների, հատկապես՝ արարողակարգային նվերների դեպքում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետության գլխի և բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ստացած արարողակարգային նվերների տնօրինման վերաբերյալ կարգավորումները, չնայած էական տարբերություններին, որոշ ընդհանուր գծեր ունեն.

1. իրավասու որևէ պետական մարմին օժտված է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նվերի ճակատագիրը որոշելու լիազորությամբ.

---

[4] Տե՛ս Code of Federal Regulations, § 102-42.20, հասանելի է՝ https://www.law.cornell.edu/cfr/text/41/102-42.20:

2. բարձրաստիճան պաշտոնատար անձին տրվում է իրավունք՝ առանձին դեպքերում մինչև պաշտոնավարման ժամկետն աշխատավայրում արարողակարգային նվերը պահելու և օգտագործելու հնարավորություն՝ ելնելով դրա նպատակային նշանակությունից.

3. նվերների տնօրինման եղանակները տարբերվում են՝ ելնելով արարողակարգային նվերների բնույթից և նպատակային նշանակությունից:

ԱՄՆ նախագահի և այլ պաշտոնատար անձանց ստացած արարողակարգային նվերների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Օտարերկրյա նվերների և հայտարարագրերի մասին» ակտով[5]: Նվերների ընդունումը, ԱՄՆ կառավարության անունից նվերներ տալը կազմակերպում է ԱՄՆ-ի պետական նախարարության արարողակարգային նվերների գրասենյակը, որը նվերների մեծամասնությունը փոխանցում է Ազգային արխիվին: Նվերները կարող են պահվել նաև համապատասխան պետական մարմինների շենքերում, իսկ որպես նվեր ստացված ուտելիքն ու հեղուկները՝ շուտ փչացող գույքը, տնօրինվում են ԱՄՆ պետական գաղտնի ծառայության ընթացակարգով:

Միացյալ թագավորությունում արքայական ընտանիքի կողմից ստացված պաշտոնական նվերների տնօրինման առաջնահերթ կանոնն այն է, որ բոլոր դեպքերում պետք է խուսափել նվիրողին վիրավորելուց կամ վնաս պատճառելուց: Այս նվերները որևէ դեպքում չպետք է վաճառվեն կամ փոխանակվեն: Դրանք կարող են.

1. պահպանվել կամ օգտագործվել արքայական ընտանիքի անդամների կողմից.

2. օգտագործվել կամ ցուցադրվել արքայական նստավայրերում կամ թագավորական ընտանիքին պատկանող տարածքներում.

3. դառնալ արքունական հավաքածուի մասը. Սովորաբար այս հավաքածուի մասն են դառնում այլ երկրների ղեկավարների կամ հյուրընկալող կառավարությունների կողմից տրված նվերները.

4. ժամանակավոր կամ մշտապես տեղակայվել հեղինակավոր կազմակերպությունում.

---

[5] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.congress.gov/89/statute/STATUTE-80/STATUTE-80-Pg952.pdf:

5. մինչև 150 եվրո արժեք ունեցող շուտ փչացող նվերները, խուսափելու համար դրանց վատնումից, կարող են տրվել բարեգործության կամ երրորդ անձանց, այդ թվում՝ աշխատակազմին, իսկ այդ արժեքի շուտ չփչացող նվերները տրվում են բարեգործության, իսկ եթե հնարավոր չէ՝ պահպանվում են:

6. փոքրարժեք նվերների դեպքում որոշ դեպքերում հնարավոր է նաև դրանց ոչնչացումը, եթե այդ նվերը չի կարող պահվել, նվիրաբերվել կամ ժամանակավոր տրվել որևէ կազմակերպության կամ անձի[6]:

Այսպիսով, արարողակարգային և պաշտոնական այցերի ժամանակ տրված նվերների դեպքում նշված նվերներն անմիջապես իրացնելը որոշ դեպքերում ոչ միայն արդյունավետ լուծում չի լինի, այլև կարող է նաև անընդունելի լինել՝ հաշվի առնելով նշված նվերների տրամադրման նպատակները և այդ նվերների էությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առկա է հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ օրենքով սահմանված դեպքերում պետության սեփականությունը դարձող նվերների տնօրինման եղանակները, կարգը և տնօրինմանն առնչվող այլ հարաբերություններն օրենսդրությամբ կարգավորելու անհրաժեշտություն:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է 2022 թվականի դեկտեմբերի 23-ին Արդարադատության նախարարությունում կայացած խորհրդակցության Արձանագրության (N Վ/144-2022) 4-րդ կետի 12-րդ ենթակետով Վարչապետի կողմից տրված հանձնարարականից:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է սահմանել հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված և Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ հիմքերով պետական սեփականություն դարձած գույքի տնօրինման հետ կապված կարգավորումներ՝ նախատեսելով այս նվերները Ծառայողի կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը թողնելու, առանձին դեպքերում՝ պետական կամ համայնքային թանգարաններին հանձնելու, հրապարակային սակարկություններով կամ նվիրաբերելու եղանակով իրացնելու, շուտ փչացող գույքի իրացման եղանակների վերաբերյալ կարգավորումներ:

[6] Առավել մանրամասն տե՛ս https://www.royal.uk/sites/default/files/media-packs/gifts_policy_2003.pdf:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է վերոնշյալ խումբ նվերների տնօրինման լիազորությամբ, որպես ընդհանուր կանոն, օժտել Պետական գույքի կառավարման կոմիտեին՝ Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, փոխվարչապետերի, նախարարների և նախարարների տեղակալների, պատգամավորական պատվիրակությունների, Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների ստացված՝ նվերների հաշվառումը և «Հանրային ծառայության մասին օրենքի» 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականություն դարձող նվերների՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 25.1.-րդ հոդվածով սահմանված եղանակներով տնօրինման եղանակների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու լիազորությունը վերապահելով Պետական արարողակարգային ծառայությանը:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև հստակեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքով թույլատրելի համարվող նվերների շրջանակը՝ դրանց շարքում նախատեսելով նաև որպես պարգևատրում կամ պետական պարգև տրամադրվող գույքը:

3. Կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքները

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ներդնել Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ հիմքերով պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման արդյունավետ գործիքակազմ, ապահովել պետության սեփականություն դարձած նվերների տնօրինման ընթացակարգի միասնականությունը և կանխատեսելիությունը, ապահովել պետական սեփականություն հանդիսացող գույքի միասնական սկզբունքներով, նպատակային և արդյունավետ կառավարումն ու տնօրինումը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

5. Նախագծի ընդունման դեպքում լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի Հանրապետության վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

Նախագիծը չի բխում ռազմավարական փաստաթղթերից: